ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թվականներ—1914 թ.), գիրք առաջին, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982, 357 էջ։

Երիտթուրքերի կառավարման տասնամյակը (1908—1918) դարձավ հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանը։ Պատահական չէ, որ այս շրջանի պատմությունը գտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում։ Սակայն մինչև այժմ հրապարակի վրա չկար մի աշխատություն, որն ամբողջական ու համակողմանի ներկայացներ երիտթուրքական շարժման սկզբնավորման հանգամանքները, նրա գաղափարական ակունքները, երիտթուրք-հայ քաղաքական առնչությունները, իթթիհատի հայահալած քաղաքականության դրդապատճառները և այլն։ Ջ. Կիրակոսյանի բազմամյա աշխատանքի արդյունքը հանդիսացող երկհատորյա ուսումնասիրությունը, որի առաջին գիրքը այժմ դրված է ընթերցողի սեղանին, գալիս է լրացնելու այդ բացը։

Պատշաճը մատուցելով նախորդ հեղինակների ուսումնասիրություններին և գիտական բարեխղճությամբ ու օբյեկտիվությամբ վերլուծելով նրանց գործերը, հեղինակը կարողացել է բազմալեզու գրականության ու աղբյուրների, մամուլի և արխիվային նյութերի հիման վրա ստեղծել հայ ժողովրդի արևմտյան հատվածի օրհասական տարիների պատմության ամբողջական պատկերը։

Միանգամայն համոզիչ ու հիմնավորված է պրոբլեմի պատմական ֆոնը։ Հեղինակը ցույց է տալիս, որ XIX դ. 80—90-ական թվականներին Օսմանյան պետականության ներքին քաղաքականության անկյունաքարը դարձած հակահայկականությունը ոչ մի տարերային բան չէր պարունակում։ Այն ծնունդ էր առել՝ խեղդելու համար արևմտահայության վերելք ապրող ազգային-ազատագրական պայքարը։ Ընդ որում, միանգամայն իրավացիորեն նշվում է, որ թուրքական իշխանությունների հակահայկական ընթացքը խարսխվում էր ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական դրդապատճառների վրա։ Օսմանյան կայսրությունում իրենց քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման մակարդակով թեև թուրքերը ետ էին մնում համարյա բոլոր հպատակ ժողովուրդներից, սակայն նրանք օգտվում էին տիրապետող տարրի բոլոր արտոնություններից։ Այս հողի վրա ծնունդ էր առել թուրքերի գերադասելիության մտայնությունը, որը դարձել էր երկրի քաղաքականության վճռական գործոններից մեկը։ Իր մրցակիցներից Ետ էր մնում նաև թուրքական նորելուկ բուրժուազիան։ Տանուլ տալով տնտեսական զարգացման քնազավառում ծայր առած մրցակցությունը, նրա ներկայացուցիչները «հենվում էին սուլթանի իշխանության, պետական մարմինների օժանդակության վրա բռնի ուժով կանխելու, ի չիք դարձնելու հույների, սլավոնների, հայերի, հրեաների բացահայտ առավելությունները» (էջ 13—14)։ Հետևաբար, միանգամայն ակներև էր, որ Օսմանյան կայսրությունում «հասարակության առաջընթացին հակադրվում էին բիրտ ուժը, յաթաղանը, զնդանը» (էջ 21)։ Իր առաջ քաշած թեզը զարգացնելիս գրքի հեղինակը բերում է Ռոզա Լյուքսեմբուրգի մի կարևոր դիտումն այն մասին, որ թուրքական բռնապետության հիմքը խարխլվում էր, սակայն նրա, իբրև ժամանակակից պետության, զարգացման հիմքը չէր ստեղծվում։ «Այդ պատճառով էլ նա պետք է խորտակվի ոչ որպես կառավարական ձև, այլ որպես պետություն, ոչ թե դասակարգային պայքարի, այլ ազգային կռիվների հետևանքով» (էջ 22)։

Առիթ դարձնելով Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցի քննարկումը և կայսրության ներսում օրավուր խորացող ազգային զարթոնքը, թուրքական կառավարող վերնախավը վճռեց կոտորածներով լուծել Հայկական հարցը։ Անդրադառնալով 1890-ական թվականների հայ ազատագրական շարժման առանձնահատկություններին, Ջ. Կիրակոսյանն իրավացիորեն նշում է, որ «ամենամեծ շարիքը համազգային ճակատի, ուժերի համախմբման բացակայությունն էր։ Ազգային պետականության ու անկախության իրավունք նվաճած նախորդ բոլոր երկրների (Հունաստան, Սերբիա, Չեռնոգորիա, Բուլղարիա և այլն) պայքարից հայկական շարժումը նախ և առաջ տար-

բերվում էր հենց դրանով» (էջ 31)։ Իսկ անցյալ դարի վերջին ձևավորված հայ ազգային կուսակցությունների «տակտիկան, գործելակերպը, մեթոդները, չափազանց հարափոփոխ էին, բացահայտ արկածախնդրական» (էջ 45)։ Միջկուսակցական տևական պայքարը խանգարում էր համազգային գործերում միասնական ճակատով հանդես գալուն։ Խոսելով երիտթուրքերի հետ դաշնակցական կուսակցության ակտիվ համագործակցության մասին, Ջ. Կիրակոսյանը շեշտում է. «պատմությունն ապացուցեց, որ իթթիհատի հետ դաշնակցության համագործակցությունը անհեռատես, ազգավնաս գործելակերպ էր, որը նպաստեց թուրքական հայակործան քաղաքականության իրականացմանը» (էջ 336)։ Ժամանակին, դատապարտելով դաշնակցության այդ քաղաքականությունը, զորավար Անդրանիկը հայտարարել է. «Եթե այս հեղափոխական կարծված թուրքերը որ մը ձեզ չկախեն, ես մարդ չեմ»։

Աշխատությունում հանգամանալից վերլուծվել է եվրոպական դիվանագիտության դիրքը Հայկական հարցում և ցույց է տրվել, որ թուրքական կառավարող շրջաններն արևմտահայության բնականոն ձգտումները՝ ազատագրվելու օսմանյան խեղդող լծից, համարում էին դրսից «հրահրված» խռովություններ։ Մինչդեռ անգլիացի պատմաբան Բրայսը ժամանակին խոստովանել է, որ եթե արևմտյան տերությունները «պարտքի ամենափոքր գիտակցությունն ունենային, Հայկական հարցը կլուծվեր առանց դժվարության» (էջ 89)։ Սակայն պատմական իրողությունն ունեցավ միանգամայն այլ ընթացք։ Առանց բացառության եվրոպական բոլոր մեծ պետությունները ցանկանում էին Հայկական հարցն օգտագործել միայն Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, նրա վրա ճնշում գործադրելու, այդ պետության վրա իրենց ազդեցությունը տարածելու, նրանից զիջումներ կորզելու և տնտեսական ու քաղաքական օգուտներ ձեռք բերելու համար։ Եզրակացությունն այն է, որ հիշյալ պետությունների տիրապետող դասակարգերը վարում էին «գաղութների թալանման, օտար ազգերի ճնշման» քաղաքականություն, բնավ չցանկանալով օգնության ձեռք մեկնել թուրքական դժոխքում գալարվող արևմտահայությանը» (էջ 112)։ Ջ. Կիրակոսյանը հատկապես մանրազնին քննել է Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ, բացահայտելով տարբեր ժամանակներում նրա երանգները։ Սակայն անկախ ցարիզմի հետապնդած նպատակներից, «խաղաղ ու ապահով կյանքի կարոտ արևմտահայ աշխատավոր գյուղացիությունը, մանրբուրժուական խավերը Ռուսաստանի հովանավորության ու պաշտպանության մեջ էին տեսնում գոյատևելու իրենց հեռանկարը» (էջ 25)։

Գրքում հանգամանալից վերլուծվում է երիտթուրքական շարժումը սկսած իր խանձարուրից մինչև պատմության թատերաբեմից իթթիհատի անփառունակ վտարումը։ Մասնավորապես ցույց է տրվում, որ նրանց հոգևոր ուսուցիչներն են հանդիսացել թուրք առաջին լուսավորիչները և սահմանադրականները, որոնք, ազգայնականությունը զրահ դարձնելով Արևմուտքի աճող ազդեցության և ներքին այլացեղ ու այլադավան տարրերի դեմ, փորձում էին բարձրացնել թուրքերի դերը կայսրության բազում ազգերի ու ժողովուրդների կոնգլոմերատի մեջ, նրան դարձնել լիարժեք տիրապետող ազդ («միլլեթ-ի հաքիմ»)։ Իթթիհատը սոցիալ-դասակարգային առումով ֆեոդալական, վարչական ու զինվորական շրջաններից սերած, միապետական ու իսլամական գաղափարներով սնված, կիսասավատական ու կիսաբուրժուական կազմակերպություն էր, որի գլխավոր նպատակը 1876 թ. միդհատյան հնացած սահմանադրության վերականգնումն էր և սահմանադրական միապետության ստեղծումը։ Ընդ որում, «հեղափոխականներ» հորջորջված երիտթուրքերը հենց սկզբից հանդես եկան որպես կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների կատաղի հակառակորդներ։ Նրանք իրենց քաղաքականության հիմքում դրեցին Աբդուլ Համիդից ժառանգած պանիսլամիզմը, այնուհետև ֆեոդալական վերնախավում մշակված օսմանիզմի գաղափարախոսությունը, ապա պանթուրքիզմն ու թուրքիզմը։ Այս բոլոր գաղափարախոսությունները պետք է ծառայեին գլխավոր նպատակին՝ Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելուն։

Ջ. Կիրակոսյանն ուշագրավ ու հարուստ փաստական նյութեր է բերում այն մասին, որ երիտթուրքական շարժման սկզբնավորման առաջին օրերից նրա հիմնադիրները բացասական դիրք բռնեցին հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ։ Ավելին, նրանք «քննադատում էին սուլթանին, որ թուրք ժողովրդին չէր հրավիրում պատժելու հայերին» (էջ 120)։ Բացահայտելով այդ անհաշտ թշնամանքի պատճառները, հեղինակը մասնավորապես շեշտում է, որ, հանդիսանալով նոր ծնունդ առնող թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչներ, երիտթուրքերը չէին կարող անտարբեր մնալ հայերի տնտեսական ակտիվության նկատմամբ։ Թուրքական բուրժուազիան ձգտում էր երկրի ներքին շուկայից դուրս մղել այլազգի բուրժուազիային և դրավել նրա տեղը։

Ներքին քաղաքականության բնագավառում ի սկզբանե շովինիզմի թույնով վարակված երիտթուրքերի գաղափարախոսությունը դարձավ թուրքիզմը, ոչ թուրք ժողովուրդների միաձուլումը «մեկ ազգ, մեկ լեզուս նշանաբանի ներքո, իսկ արտաքին քաղաքականության մեջ, պանթուրքիզմը, որը քաջալերում էր անդուսպ կերպով շարժվել դեպի «Մեծ Թուրան՝ թուրքական պետականության դրոշի տակ համախմբելու համար բոլոր թուրքալեզու ժողովուրդներին։ Իրենց այդ գերագույն նպատակին հասնելու ճանապարհին նրանք պատրաստ էին ոչնչացնելու բոլոր արգելքները և, առաջին հերթին, Հայաստանը, որը սեպի պես խրված էր Թուրքիայի ու Թուրանի միջև։ Պատահական չէ, որ իթթիհատն իր քաղաքական ծրագրի իրականացման նախապայման հռչակեց «Հայկական հարցի ամատական լուծումը» (էջ 223), որի տակ, անշուշտ, հասկացվում էր հայ ժողովրդի նախապատրաստվող հրեշավոր ցեղասպանությունը։ Այդ ծրագիրը, սակայն, չէր ավարտվելու մեկ եզակի փուլով։ Որոշված էր սկզբում ոչնչացնել հայերին, հետո հույներին, ապա քրդերին (էջ 227)։

Ջ. Կիրակոսյանը մեր պատմագիտական գրականության մեջ առաջին անգամ հանգամանորեն կանգ է առնում երիտթուրք-սիոնիստական առնչությունների հարցի վրա, ցույց տալով, որ երիտթուրքական շարժումը սերտորեն կապված էր սիոնիստական կազմակերպությունների հետ և նրանցից փոխ էր առել ռասիզմը, ազգային բացառիկության, թուրքերի գերազանցության վերաբերյալ ամեն տեսակի անհեթեթությունները։ Խորամուխ լինելով դրա դրդապատճառների մեջ, հեղինակը մասնավորապես նշում է, որ «դեմոկրատիայի հաստատումով թուրքերը հեշտությամբ կարող էին կորցնել իրենց արտոնյալ վիճակը կայսրության գործերում, մանավանդ, որ ամբողջ բնակչության մեջ փոքրամասնություն էին կազմում» (էջ 136)։ Այդ էր պատճառը, որ որպես փրկության խարիսխ նրանք ապավինեցին ռասսայական տեսությանը և գլորվեցին «դեպի իրենց բնական միջավայրը», դեպի ասիականությունը կամ թուրքականությունը (էջ 169)։

Գրքում Ջ. Կիրակոսյանը կատարում է կարևոր ու գնահատելի ընդհանրացումներ ու ամփոփումներ։ Նա չափազանց մեծ տեղ է հատկացնում թուրք և թրքամետ հեղինակների գրվածքների քննադատությանը, որոնք խեղաթյուրում են պատմական փաստերը, դրանք ներկայացնում ծուռ հայելու մեջ։ «Պատմության կեղծարարությունը,— գրում է նա,— Թուրքիայում կատարվում է պետական մակարդակով» (էջ 9)։

Աշխատության կարևորագույն արժանիքներից է այն, որ նրանում ակնառու ցուցադրվում է թուրքական քաղաքականության ժառանգականությունը և օրգանական հաջորդականությունը ոչ թուրք ժողովուրդների ու նրանց ազգային իղձերի ու շարժումների նկատմամբ։

Մեր կարծիքով, աշխատությունն ավելի կուռ դարձնելու համար հարկավոր էր համախմբել հայ քաղաքական կուսակցությունների ու գործիչների տեսակետները և դիրքավորումները երիտթուրքական շարժման ու երիտթուրքերի քաղաքականության հանգուցային խնդիրների նկատմամբ։ Իթթիհատի սոցիալ-դասակարգային դեմքն ավելի բացահայտորեն ցուցադրելու համար պետք էր նաև առավել հանգամանորեն անդրադառնալ երիտթուրքական համագումարներում քննարկված, առաջին հայացքից երկրորդական թվացող, հարցերին։ Նպատակահարմար էր հատուկ բաժին հատկացնել այն հարցի բացահայտմանը, որ հայ իրականության մեջ եղել են բազմաթիվ գործիչներ, որոնք, դատապարտելով իթթիհատի հետ դաշնակցական կուսակցության համագործակցության գիծը, նշում էին, որ անհրաժեշտ է տարանջատվել երիտթուրքերից և սերտ համագործակցության մեջ մտնել Օսմանյան կայսրության մյուս ճնշված ժողովուրդների ազգային-բուրժուական կուսակցությունների հետ։

Անտարակույս Ջ. Կիրակոսյանի սույն ուսումնասիրությունը կարևոր ավանդ է սովետահայ պատմագիտության բնագավառում։ Այն մեր ընթերցող լայն հասարակայնությանը կօգնի ավելի իրազեկ դառնալու սեփական ժողովրդի պատմության ողբերգական էջերին։

ՎԱՀԱՆ ԲԱՅԱԹՈՒՐԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր